

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Իրանի Իսլամ. Հանրապետության
"Մեյլաթ" բանկի Վարչության
10.02.2021 թվ. N 4995 նիստի որոշմամբ
Բանկի Վարչության նախագահ՝
Մոհամմադ Բիգդելի



ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀՀ Կենտրոնական բանկում
թվ.
Գրանցման համար 78
ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝
Մարտին Գալստյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Դ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

"Մեյլաթ բանկ" փակ բաժնետիրական ընկերություն

("ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ" ՓԲԸ)

Նոր խմբագրությամբ
2021թվ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության
(ընկերության իրավասու մարմնի անվանումը)*

10/02/2021թ. թիվ 4995 որոշմամբ

Փոփոխված է

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 25/05/2005թ. թիվ 2467
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 25/12/2005թ. թիվ 2625
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 31/05/2006թ. թիվ 2567
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 27/12/2006թ. թիվ 2627
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 16/03/2008թ. թիվ 2759
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 19/04/2009թ. թիվ 2873/1
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 12/12/2009թ. թիվ 88/4023
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 14/05/2014թ. թիվ 1950
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 02/05/2015թ. թիվ 0053/105
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 25/04/2016թ. թիվ 1408
(իրավասու մարմնի անվանումը)*

*ԻԻՀ «Մելլաթ Բանկ» ԲԲԸ վարչության 05/09/2016թ. թիվ 2971
(իրավասու մարմնի անվանումը)*

Որոշմամբ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Մելլաթ Բանկ» ՓԲԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Մելլաթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) ՀՀ Կենտրոնական բանկում, որպես իրավաբանական անձ գրանցվել է 02.09.1997թ. (բանկային գործունեության լիցենզիա N 78):

1.2. Բանկը ստեղծվել է ՀՀ և ԻԻՀ միջև «Բարեկամության և համագործակցության մասին» 1992թ. մայիսին ՀՀ նախագահ՝ Լ. Տեր Պետրոսյանի և ԻԻՀ նախագահ՝ Հաշեմի Ռաֆսանջանիի համատեղ հայտարարության հիման վրա ՀՀ Կենտրոնական բանկի և ԻԻՀ «Մելլաթ Բանկի» միջև կնքված համաձայնագիր – թույլտվության համաձայն:

1.3. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են բանկի մասնակիցների և կառավարման մարմինների համար: Իր գործունեության ընթացքում Բանկն ենթարկվում է Հայաստանի Հանրապետության օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին:

1.4. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից:

1.5. Բանկն իրավունք ունի իրականացնելու բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու օրվանից և այդ լիցենզիայի գործողության ընթացքում:

1.6. Բանկն երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը օրենքով սահմանված կարգով:

1.7. Բանկի հաճախորդների բանկային ավանդները և Բանկին ի պահ հանձնված նրանց դրամական միջոցները և այլ գույքը կարող է բռնագանձվել, դրանց վրա կարող է կալանք (արգելանք) դրվել, առգրավում կամ բռնագանձում տարածվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրավասու պետական մարմնի կողմից:

1.8. Բանկը պատասխանատվություն չի կրում իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.9. Բանկն իր պարտականությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.10. Հայաստանի Հանրապետությունը պատասխանատվություն չի կրում Բանկի պարտավորությունների համար, եթե վերջինիս անունից գործող պետական մարմինները դրանք չեն ստանձնել, որպես երրորդ անձ, կամ չեն երաշխավորել դրանց կատարումը, որպես՝ երաշխավոր:

1.11. ՀՀ Կենտրոնական բանկը պատասխանատվություն չի կրում Բանկի պարտավորությունների համար, եթե դրանք չի ստանձնել որպես երրորդ անձ, կամ չի երաշխավորել դրանց կատարումը, որպես երաշխավոր:

1.12. Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք (միջոցներ), օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ, բլանկներ և համարային կնիքներ:

1.13. Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր կամ պատասխանող դատարանում:

1.14. Բանկի գլխամասային գրասենյակի գտնվելու վայրը՝ հասցեն՝
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Չարենցի 19

1.15. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «Մելլատ Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն

պարսկերեն՝ *ملت بانک شرکت سهامی خاص*

ռուսերեն՝ «Меллат Банк» Закрытое акционерное общество

անգլերեն՝ **Mellat Bank closed joint stock company**

1.16. Բանկի կրճատ անվանումն է՝

հայերեն՝ «Մելլատ Բանկ» ՓԲԸ

պարսկերեն՝ *ملت بانک شرکت سهامی خاص*

ռուսերեն՝ «Меллат Банк» ЗАО

անգլերեն՝ **Mellat Bank CJSC**

1.17. Բանկը կրում է օրենսդրությամբ Բանկին վերապահված իրավունքներն ու պարտականությունները, անկախ դրանք սույն կանոնադրությամբ նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է սահմանված:

1.18. Բանկի կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ ընդհանուր ժողով), Բանկի խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ), Բանկի գործադիր տնօրենը (այսուհետ՝ գործադիր տնօրեն):

1.19. Բանկը պարտավոր է ապահովել Բանկում գտնվող դրամական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների, նյութական այլ արժեքների և փաստաթղթերի հուսալի պահպանությունը: Այդ նպատակով Բանկը պարտավոր է ունենալ սեփական պահպանության անձնակազմ կամ պահպանությունը պայմանագրային կարգով հանձնարարել համապատասխան թույլտվություն ունեցող հիմնարկների կամ իրավաբանական անձանց:

2. ԲԱՆԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

2.1. Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք ՀՀ տարածքում հիմնելու դեպքում գրանցվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

2.2. Բանկի տարածքային ստորաբաժանումները գործում են բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

2.3. Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. Մասնաճյուղը բանկի անունից կարող է իրականացնել բանկային գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությունով նախատեսված ֆինանսական գործառնություններ, ինչպես նաև կատարել ներկայացուցչական ֆունկցիա:

2.5. Ներկայացուցչությունը ներկայացնում է բանկի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունն առանց բանկային գործունեություն կամ օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու:

2.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը (միջոցները) հաշվառվում է ինչպես բանկի հաշվեկշռում, այնպես էլ դրանց առանձին հաշվեկշիռներում:

2.7. Բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են բանկի խորհրդի կողմից և գործում են տարածքային ստորաբաժանման կանոնադրության համաձայն:

2.8. Բանկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բանկի տարածքային ստորաբաժանման ղեկավարը նշանակվում է ՀՀ Կենտրոնական բանկում մասնագիտական համապատասխանելիության քննում անցնելուց հետո:

2.9. Բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնական սխալ գործողությունների կամ անգործության հետևանքով Բանկին պատճառված վնասների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1. Բանկը բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով բանկերին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները, այդ թվում՝

- ընդունել ցպահանջ, ժամկետային ավանդներ համաձայն գործող օրենսդրության,
- տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
- տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ),
- բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,
- մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները,
- թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ,
- իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն,
- մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային, լիազորագրային կառավարում),
- գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամներ,
- գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
- ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

- մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն, ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

- իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ):

3.2. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային գործունեություն իրականացնելու համար:

3.3. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է բանկի ակտիվների հաշեկշռային արժեքի 25-50%-ը, պետք է միաձայն ընդունվի խորհրդի կողմից, իսկ 50%-ից ավելի դեպքում՝ պետք է ընդունվի ընդհանուր ժողովի կողմից՝ մասնակիցների ձայների 3/4-ով:

3.4. Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե բանկերի համար դրանք թույլատրված չեն օրենքով կամ իրավական այլ ակտերով:

3.5. Բանկը ֆինանսական գործառնություններ իրականացնում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.6. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, իր կողմից տրամադրվող վարկերի, իր կողմից թողարկված արժեթղթերի տոկոսադրույքները և իր ծառայությունների միջնորդավճարների չափը:

3.7. Բանկի և հաճախորդի միջև հարաբերությունները կարգավորվում են օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրերով, այդ թվում՝ հրապարակային պայմանագրերով:

4. ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

4.1. Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում բանկի մասնակցությունը՝

-մեկ այլ անձի (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ) կանոնադրական հիմնադրամում 4.99 % և ավելի մասնակցություն է (բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 4-րդ կետի բ) ենթակետով նախատեսված անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունից),

-մեկ այլ անձի (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ) կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15 % -ը (բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 4-րդ կետի բ) ենթակետով նախատեսված անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունից),

-բոլոր անձանց (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ) կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35%-ը (բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 35 հոդ. 4-րդ կետի բ) ենթակետի):

Սույն կետով նախատեսված սահմանափակումները չի տարածվում Բանկի նկատմամբ ստանձնած և չկատարված պարտավորության դիմաց տվյալ անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցության ձեռք բերման վրա: Ընդ որում, Բանկը պարտավոր է օտարել հիշյալ մասնակցությունը ձեռք բերման պահից օրենքով սահմանված ժամկետներում:

5. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

5.1. Բանկն ունի կանոնադրական հիմնադրամ, որը հավասար է տեղաբաշխված բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի գումարին:

5.2. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կազմում է 32.100.000.000 (երեսուներկու միլիարդ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որը բաղկացած է 32.100.000.000 (երեսուներկու միլիարդ հարյուր միլիոն) ՀՀ դրամ անվանական արժեքով մեկ հատ սովորական բաժնետոմսից: Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսեր բանկը չունի:

5.3. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ:

5.4. Բանկի կանոնադրական կապիտալը ավելացվում է տեղաբաշխված բաժնետոմսի անվանական արժեքի ավելացման ձևով, որի մասին որոշումը ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից: Կանոնադրական կապիտալի նվազեցում չի նախատեսվում:

5.5. Բանկը, իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո, կարող է շահույթի մի մասը ներդնել կանոնադրական հիմնադրամում բաժնետերերին տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր կամ ավելացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:

5.6. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը գործունեության ընթացքում կամ դրա հաշվին շահաբաժիններ բաշխելը արգելվում է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

5.7. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի 15%-ից ոչ պակաս չափով, որն օգտագործվում է Բանկի կրած կորուստները (վնասները) ծածկելու, Բանկի թողարկած պարտատոմսերը մարելու համար, եթե Բանկի շահույթը այդ նպատակին չի բավարարում:

5.8. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի զուտ շահույթից՝ տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների չափը սահմանվում է տարեկան զուտ շահույթի 5% -ի չափով:

5.9. Բանկն իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրս գրման պահուստային հիմնադրամ:

5.10. Ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստել Բանկի տնտեսական զարգացմանը և Բանկի աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը:

5.11. Այլ հիմնադրամների ձևավորումն ու դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են ժողովի կողմից:

6. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ

6.1. Բանկի բաժնետոմսերը տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ ժողովի կողմից որոշվող շուկայական արժեքը:

6.2. Բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց , որպես վճարման միջոց կարող են օգտագործվել միայն ՀՀ դրամը: Թողարկվող բաժնետոմսերը կարող են ձեռք բերվել նաև դրանք բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերով փոխարկելու միջոցով:

6.3. Թողարկվող բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց վճարումը պետք է կատարվի տեղաբաշխման գնի 100 տոկոսի չափով, բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված տեղաբաշխման ժամկետի ընթացքում:

6.4. Բանկի մեկ սովորական բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է ժողովում մեկ ձայնի իրավունք:

6.5. Բանկի բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաժնետոմսերի տեղաբաշխման գրանցամատյանում գրանցման տեսքով: Տեղաբաշխման արդյունքներն ամփոփելուց հետո տեղաբաշխման գրանցամատյանի տեղեկությունները գրանցվում են Բանկի բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում: Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիան:

6.6. Բանկի բաժնետոմսերի օտարման արդյունքում նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագում, իսկ նախկին սեփականատիրոջ իրավունքը դադարում է մասնակցների ռեեստրում համապատասխան փոփոխություն կատարելուց պահից:

7. ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

7.1. Բանկը կարող է բաց կամ փակ բաժանորդագրությամբ թողարկել անվանական, օրդերային կամ ներկայացուցչական պարտատոմսեր, այդ թվում սովորական բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսեր:

7.2. Բանկի պարտատոմսերի թողարկումը կատարվում է Բանկի խորհրդի որոշմամբ: Խորհրդի որոշմամբ սահմանվում են պարտատոմսերի մարման ձևը, ժամկետները և պայմանները:

7.3. Բանկի կողմից թողարկված բոլոր պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չի կարող գերազանցել բանկի կանոնադրական հիմնադրամի մեծությանը:

7.4. Բանկն իրավունք ունի սահմանված կարգով թողարկել մուրհակներ, չեկեր, ավանդային սերտիֆիկատներ և օրենսդրությամբ նախատեսված այլ արժեթղթեր:

7.5. Բանկի անվանական ու օրդերային պարտատոմսերի և անվանական ու օրդերային այլ արժեթղթերի օտարման արդյունքում նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագում, իսկ նախկին սեփականատիրոջ իրավունքը դադարում է Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում համապատասխան փոփոխություն կատարելու պահից:

7.6. Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարվում է օրենքով սահմանված կարգով:

8. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐ

8.1. Բանկի միակ բաժնետերն Իրանի Իսլամական Հանրապետությունում գրանցված «Մելլաթ բանկ» բաց բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ ԻԻՀ «Մելլաթ բանկ» ԲԲԸ):

8.2. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել , որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

8.3. Բանկի բաժնետերերը պարտավոր են`

-բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում վճարել իր բաժնետոմսերի արժեքը,

-ձեռնպահ մնալ բանկի հաճախորդների և բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց,

-բանկի հետ հարաբերություններում ենթարկվել օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջներին:

8.4.Բանկի սովորական բաժնետոմսի սեփականատեր բաժնետերը իրավունք ունի՝

-անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի, ենթարկվելով սույն կանոնադրության 8.7 կետի սահմանափակումներին,

-անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել բանկի կառավարմանը, օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում մասնակցող անձի մասնագիտական որակավորման վերաբերյալ Կենտրոնական բանկի դրական եզրակացության առկայության դեպքում,

-ստանալ շահաբաժիններ բանկի գործունեությունից առաջացած շահույթից, ենթարկվելով սույն կանոնադրության 8.7 կետի սահմանափակմանը,

-ստանալ բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկատվություն, եռօրյա ժամկետում,

-ձանդախանալ բանկի հաշվեկշիռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին,

-Բանկի լուծարման դեպքում ստանալ բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը,

-մյուս բաժնետերերին նախնական ծանուցմամբ՝ գնման հնարավորություն ապահովելով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը,

-կատարել օրենսդրությամբ իրենց վերապահված այլ գործողություններ:

8.5.Բանկի բաժնետերն առանձին վերցրած կամ իր հետ փոխկապակցված այլ անձի հետ միասին բանկի սովորական բաժնետոմսերի 10 տոկոս և ավելին ձեռք բերելու դեպքում պարտավոր է նախօրոք ստանալ ՀՀ Կենտրոնական բանկի համաձայնությունը:

8.6.Անձը և նրա հետ փոխկապակցված անձինք իրավունք չունեն ձեռք բերել Բանկի սովորական բաժնետոմսերի 10 % և ավելին, եթե՝

-անձը դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունի,

-անձը դատավճռով զրկվել է որոշակի պաշտոններ վարելու իրավունքից,

-անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի,

-անձի գործողությունները նախկինում հանգեցրել են բանկի կամ այլ անձի սնանկացմանը,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

8.7.Բանկի բաժնետերը չի օգտվում բանկի սովորական բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսի մասով, առանձին վերցրած իրեն կամ իր հետ փոխկապակցված անձի հետ միասին իրենց վերապահվող ձայնի և շահաբաժիններ ստանալու իրավունքից, եթե այն ձեռք է բերվել ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

9.ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

9.1.Տարեկան գործունեության արդյունքում բանկի ստացած համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ ՀՀ Հարկային օրենսդրության համաձայն:

9.2.Բանկի գուտ շահույթը որոշվում է, որպես բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների (ներառյալ հարկային օրենսդրությամբ չնվազեցվող) և վճարված շահութահարկի դրական տարբերություն:

9.3.Զուտ շահույթի բաշխումն իրականացվում է սույն կանոնադրությամբ և ժողովի կողմից սահմանված հիմնադրամներ համալրման և սովորական բաժնետոմսերի սեփականատերերին շահաբաժինների վճարման նպատակով:

9.4.Շահաբաժինները վճարվում են ֆինանսական (հաշվետու) տարվա շահույթից տարեկան շահաբաժինների ձևով:

9.5.Տարեկան շահաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և ձևի մասին որոշումը ընդունում է ընդհանուր ժողովը, սահմանելով նաև վճարման ամսաթիվը:

9.6.Բանկի բաժնետերերին շահաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե տվյալ պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին բանկում առկա չբաշխված գուտ շահույթի գումարը:

10.ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ,ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1.Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորությունները իրականացնում է ԻԻՀ «Մեյլաթ բանկ» ԲԲԸ-ն:

10.2.Ժողովները կարող են լինել հերթական (տարեկան) կամ արտահերթ՝ պարտադիր ներկա գտնվելու կարգով:

10.3.Տարեկան ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո երկուսից վեց ամսվա ընթացքում: Ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում է դեկտեմբերի 31-ին:

10.4.Արտահերթ ժողովները գումարվում են խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ:

10.5.Արտահերթ ժողովները կարող են գումարվել նաև պահանջը ներկայացնելու դրությամբ բանկի առնվազն 10% քվերարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ /բաժնետերերի/, բանկի գործադիր մարմնի, բանկի աուդիտն անցկացնող անձի պահանջով, եթե ներկայացված օրակարգի հարցերը սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի իրավասությանը:

10.6.Բանկի գործադիր մարմնի, աուդիտն անցկացնող անձի, կամ պահանջը ներկայացնելու օրվա դրությամբ բանկի առնվազն 10 տոկոս քվերարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ /բաժնետերերի/ արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացված պահանջի առկայության դեպքում, խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:

10.7.Բաժնետերերի ցուցակում, բաժնետիրոջ կողմից տիրապետվող ձայների կազմում չեն հաշվարկվում նշանակալից մասնակցություն հանդիսացող այն բաժնետոմսերը, որոնց սեփականատերերի ձայնի իրավունքը սահմանափակված է իրենց և իրենց հետ փոխկապակցված անձանց հետ միասին նշանակալից մասնակցության ունենալու հետ կապված սահմանափակումներով (սույն կանոնադրության 8.7 կետ):

10.8.Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա)բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե

նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր.

բ) բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը: Բանկը արտոնյալ բաժնետոմսեր չունի
գ) բանկի բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր տնօրենը (կամ տնօրենի տեղակալը), խորհրդակցական ձայնի իրավունքով.

դ) բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.
ե) բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունը առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).

զ) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.
10.9. Բանկը ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Բանկի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) Ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, ինչպես նաև բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը.

է) խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը) բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ) ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժա) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումն.

ժբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

ժգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

ժդ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

ժե) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.

ժզ) խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

ժէ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժը) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:

11.2.Ժողովի որոշումները ձևակերպվում են մասնակցի լիազորությունները իրականացնող ԻԻՀ «Մեյլաթ Բանկ» ԲԲԸ-ի վարչության որոշումների ձևով:Ժողովի կողմից քննարկվող հարցերը նախապատրաստվում և ներկայացվում է Բանկի խորհրդի կողմից:

11.3.Սույն կանոնադրության 11.1. կետում նշված իրավասությունները հանդիսանում են ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմնի:

11.4. Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքով կամ սույն կանոնադրության 11.1 կետով ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

12. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ՝ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐ

12.1.Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարում՝ օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

12.2.Խորհրդի անդամ կարող է լինել ՀՀ քաղաքացի կամ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որը բավարարում է հետևյալ պայմաններին, այն է՝ չունի դատվածություն կամ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված է, չի գրկվել որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից, սնանկ չի ճանաչվել և չունի չմարված պարտավորություններ, իր գործողություններով պատճառ չի հանդիսացել որևէ Բանկի կամ այլ անձի սնանկացման համար, իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ մասնագիտական համապատասխանելիության վերաբերյալ դրական եզրակացության առկայություն:

12.3.Խորհրդի անդամները ընտրվում են տարեկան ընդհանուր Ժողովի կողմից, ոչ պակաս մեկ տարի պաշտոնավարման ժամկետով: Խորհրդի անդամի լիազորության ընդհանուր ժամկետը չի սահմանափակվում: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Խորհրդի նոր անդամի ընտրությունը կատարվում է Բանկի միակ բաժնետեր՝ ԻԻՀ-ի «Մեյլաթ Բանկ» ԲԲԸ-ի վարչության կողմից:

12.4. Խորհրդի կազմը սահմանվում է 5 անդամից:

12.5.Խորհրդի անդամները չպետք է միմիանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և Բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինեն միմիանց հետ փոխկապակցված անձիք:

12.6.Խորհրդի անդամները վարձատրվում են Բանկի կողմից:

12.7.Բանկի խորհրդի նախագահը ընտրվում է խորհրդի կողմից, խորհրդի անդամների կազմից և գործում է Բանկի կանոնադրության համաձայն:

12.8. Խորհրդի նախագահը սույն կանոնադրության համաձայն՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ) նախագահում է Բանկի ընդհանուր ժողովում.

12.9.Բանկի խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, առնվազն տարին մեկ անգամ:

բ) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

գ) քանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) քանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, քանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) քանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) քանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.

է) շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող քանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն քանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են քանկի բաժնետերերի ռեեստրում քանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

ը) քանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

թ) քանկի ընդհանուր ժողովի հաստատմանը քանկի արտաքին աուդիտին իրականացնող անձի ներկայացումը.

ժ) քանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

Ճ) քանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

Ժբ) քանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժգ) քանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, քանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը.

ժդ) սույն կանոնադրության 11.1 կետի “բ”, “ժբ”, “ժգ”, “ժդ”, “ժե”, “ժզ” ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը.

ժե) քանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբախշման մասին որոշման ընդունումը.

ժզ) քանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժէ) քանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժը) քանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը:

ի) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

12.10.Սույն կանոնադրության 12.9 կետով թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է քանկի խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել քանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց:

12.11.Տարին մեկ անգամ քանկի խորհուրդն իր նիստում քննարկում է քանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը, ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում քանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտեր:

12.12.Եռամսյակը մեկ անգամ բանկի խորհուրդը քննարկում է բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները իր սահմանած կարգով և ձևով, որոնք ներկայացվում են համաձայն բանկի խորհրդի կողմից հաստատված «Հաշվապահական հաշվառման բաժնի գործունեության վերաբերյալ», «Ներքին աուդիտի բաժնի գործունեության վերաբերյալ», «Ներքին հսկողության համակարգի կազմակերպման մասին» կանոնակարգերի և սույն կանոնադրության համաձայն: Հաշվետվությունները ներկայացվում են Խորհրդին, Խորհրդի կողմից հաստատված բանկի ներքին կանոնակարգերին համապատասխան:

12.13.Բանկի խորհրդի նիստերն գումարվում են երկու ամիսը մեկ անգամ Բանկի ընթացիկ աշխատանքները քննարկելու, ամփոփելու և համապատասխան որոշումներ ընդունելու համար: Որպես կանոն Խորհրդի նիստերն անցկացվում է քաղաք Թեհրանում: Օրենքով սահմանված դեպքերում Բանկի Գործադիր տնօրենի պահանջով Խորհրդի նիստերը կարող են անցկացվել Երևան քաղաքում:

12.14. Բանկի խորհրդի նիստերը գումարում է բանկի խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, բանկի գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, բանկի արտաքին աուդիտին իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 և ավելի տոկոս ունեցող մասնակցի գրավոր պահանջով:

12.15. Բանկի Խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի անդամների պարտադիր ներկա գտնվելու կարգով:

12.16. Խորհուրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն բանկի գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ (ներկա գտնվելու կարգով կամ հեռախոսային կապի միջոցով), բացառությամբ բանկի գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի գործադիր տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհրդի նիստերին կարող է մասնակցել (ներկա գտնվելու կարգով կամ հեռախոսային կապի միջոցով) բանկի ներքին աուդիտի բաժնի պետը՝ որպես դիտորդ:

12.17. Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը այլ անձի չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

12.18. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին մասնակցած անձիք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի.

ե) քվեարկության դրած հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

զ) նիստում ընդունված որոշումները:

12.19. Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

12.20.Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար: Խորհրդին կից հանձնաժողովներ չկան: 12.21.Խորհրդի նիստերը Երևան քաղաքում անցկացնելու դեպքում Խորհրդի անդամների գործուղման ծախսերը կատարվում են Բանկի կողմից:

13. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ` ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

13.1.Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է բանկի գործադիր տնօրենը:

13.2.Բանկի գործադիր տնօրենը նշանակվում է բանկի խորհրդի կողմից, գործադիր տնօրենի տեղակալները նշանակվում են խորհրդի կողմից՝ գործադիր տնօրենի ներկայացմամբ:

13.3. Բանկի գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն՝

ա) ներկայացնում է բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.

բ) տնօրինում է բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում բանկի աշխատակիցներին, բացառությամբ բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին.

դ) բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

ե) ապահովում է ընդհանուր ժողովի և բանկի խորհրդի որոշումների կատարումը.

զ) իրականացնում է բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ.

է) նախապատրաստում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում բանկի ֆինանսական գործառնությունների իրականացման կարգերը և հրահանգները.

ը) նախապատրաստում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին կանոնակարգերը, ինքնուրույն կառուցվածային ստորաբաժանումների կանոնակարգերը, բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և աշխատատեղերը (հաստիքացուցակը).

թ) կարգավորում է կադրերի ուսուցման և վերապատրաստման հարցերը.

ժ) լուծում է օրենքով իրեն վերապահված այլ հարցեր:

13.4. Բանկի գործադիր տնօրենն եռամսյակը մեկ անգամ ներկայացնում է խորհրդին իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն, խորհրդի սահմանած կարգով:

13.5. Գործադիր տնօրենի նիստերը (որոնց կարող են մասնակցել բանկի ներքին աուդիտի բաժնի պետը, ինչպես նաև տնօրենի կողմից նշված համապատասխան աշխատակիցները) անցկացվում են բանկի ներքին կանոնակարգերով սահմանված հարցերի քննարկման և որոշումներ ընդունելու դեպքում, ինչպես նաև բանկի ընթացիկ գործունեության հարցերով որոշումներ ընդունելու համար:

13.6. Բանկի գործադիր տնօրենի իրավասությանն ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել բանկի կառավարման այլ մարմնի, բանկի ներքին աուդիտին, բանկի

գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ, եթե բանկի գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Խորհրդի կողմից գործադիր տնօրենի լիազորությունները դադարեցվում են օրենքով սահմանված դեպքերում:

14. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

14.1. Բանկի գլխավոր հաշվապահին իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

14.2. Գլխավոր հաշվապահը նշանակվում է բանկի խորհրդի կողմից՝ բանկի գործադիր տնօրենի ներկայացմամբ:

14.3. Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

14.4. Բանկի գլխավոր հաշվապահին եռամսյակը մեկ անգամ բանկի խորհրդին և գործադիր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

14.5. Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի և այլ իրավական ակտերին համապատասխան:

15. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

15.1. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը (ներքին աուդիտի բաժնի պետը) և անդամները (բաժնի աշխատակիցները) նշանակվում են բանկի խորհրդի կողմից:

15.2. Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձիք: 15.3. Բանկի ներքին աուդիտը բանկի խորհրդի հաստատած «Ներքին աուդիտի բաժնի գործունեության վերաբերյալ» ներքին կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ:

բ) հսկողություն է իրականացնում բանկի գործադիր տնօրենի, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և բանկի ներքին ակտերի, գործադիր տնօրենին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ:

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

15.4.Բանկի ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

15.5.Բանկի ներքին աուդիտի ղեկավարը բանկի խորհրդին և գործադիր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները, հանաձայն խորհրդի կողմից հաստատված «Ներքին աուդիտի բաժնի գործունեության վերաբերյալ» ներքին կանոնակարգի՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են գործադիր տնօրենի կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է ամիջապես խորհրդի նախագահին՝ խախտումը հայտնաբերելուց երկու աշխատանքային օրվա ընթացքում:

15.6.Բանկի ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել բանկի խորհրդին, միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ համաձայն բանկի խորհրդի կողմից հաստատված «Ներքին աուդիտի բաժնի գործունեության վերաբերյալ» ներքին կանոնակարգի:

16. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ , ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

16.1.Բանկի գործունեության արդյունքներն արտացոլվում են Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններում, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում:

16.2. Հաշվառումը Բանկում իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի և կառավարության լիազորած մարմնի հետ համաձայնեցված կարգով, ՀՀ և միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

16.3.Բանկը կազմում և օրենքով սահմանված ժամկետներում մամուլում և ինտերնետի բանկի տնային էջում հրապարակում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվությունը:

16.4.Բանկը օրենքով սահմանված տեղեկությունները ներկայացնում է ՀՀ Կենտրոնական բանկին, իսկ իր միակ բաժնետեր ԻԻՀ-ի «Մելլաթ բանկ» ԲԲԸ-ին՝ պահանջը ներկայացնելու պահից եռօրյա ժամկետում:

17. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐՈՒՄԸ

17.1.Բանկի վերակազմակերպումը կատարվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների համապատասխան:

17.2 Բանկի գործունեությունը դադարում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված դեպքերում: Բանկի գործունեությունը համարվում է դադարեցված, երբ բանկի լուծարային հանձնաժողովը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանած կարգով վաճառում

է բանկի գույքը և առաջացած միջոցներով բավարարում է ըստ հերթացուցակի պահանջատերերի պահանջները:

18.ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

18.1.Սույն կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ կարող են կատարվել միայն բանկիբաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

18.2.Կանոնադրության մեջ կատարված լրացումները և փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՀՀ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

18.3. Օրենսդրության փոփոխության դեպքում, մինչև համապատասխան ոփոխությունների կատարումը, սույն կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում տվյալ պահին գործող օրենսդրությանը: